

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

ՀԱՅԿ ՄԱՐԳՍՅԱՆ, ԺԻՐԱՅՐ ՄԻԻԹԱՐՅԱՆ

1. Ներածություն: Վերջին տասնամյակներում իրադրությունը համաշխարհային և ազգային տնտեսությունների մակարդակում առավել խոցելի ու հեղհեղուկ է դարձել, տնտեսական և ֆինանսական ճգնաժամերի հաճախականությունն աճել է¹, իսկ յուրաքանչյուր ճգնաժամ անխուսափելիորեն իր հետ բերել է հետճգնաժամային նոր «ստատուս քվո», որը երբեք չի կրկնել մինչճգնաժամային իրավիճակը՝ մարտահրավեր նետելով տնտեսագիտական գործող հարացույցներին և ընթացիկ տնտեսական քաղաքականություններին:

Տնտեսական այս հարափոփոխ միջավայրում հետզհետե ավելի է կարևորվում *տնտեսական արժեքանական հիմնարարների* (ֆունդամենտալների) գոյությունը, որոնք, անկախ տնտեսական ամենատարբեր վայրիվերումներից, կխարսխեն և կուղենշեն տնտեսական հարաբերություններն ու տնտեսական քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարում՝ դառնալով տնտեսության կայուն զարգացման հուսալի երաշխիք: Այդպիսիք են *տնտեսական հարաբերությունների սահմանադրական-ինստիտուցիոնալ սկզբունքներն ու կանոնները*:

Տնտեսության կարգավորման ինստիտուտների անբավարար գործառնությունը գերիշխող է դարձնում շուկայական տարերքը, երբ մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման դեֆիցիտը հսկայական չափերի է հասնում՝ ներհասարակական պայթյունավտանգ իրավիճակների առաջացման հիմք դառնալով: Վերջիններիս լուծումները պետք է փնտրել տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման բավարար մակարդակ ապահովող կառուցակարգերի մեջ:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման հիմնահարցերի քննարկումից առաջ հակիրճ անդրադառնանք մարդու կյանքի իրավունքի իրացմանը, որը հույժ կարևոր է մշտապես և խիստ առօրեական այսօրվա իրողությունների համատեքստում: Ադրբեջա-

¹ Տե՛ս, օրինակ՝ **Eichengreen B. Bordo M.** Crises Now and Then: What Lessons from the Last Era of Financial Globalization?, Working paper 8716, NBER, 2002, “Integrating Stability Assessments Under the Financial Sector Assessment Program into Article IV Surveillance”, IMF, 2010, էջ 18, Long-Term Asset Return Study: The Next Financial Crisis, Deutsche Bank, 2017:

նա-թուրքական ագրեսիայից ու սանձազերծած պատերազմից դասեր քաղելու ու մեր անելիքների՝ գիտակրթական համակարգի նկատմամբ մեր վերաբերմունքի էական փոփոխումը միայն կերաշխավորի անվտանգ ապրելու իրավունքն ապագայում:

Մահմանադրական իրավունքների հարացույցում մարդու կյանքի իրավունքը վերին սանդղակում է: Դրան ստորադասվում են պատշաճ կենսամակարդակի, աշխատանքի և տարաբնույթ այլ իրավունքներ:

«Ինքնորոշված (դեռևս միջազգայնորեն դե յուրե չճանաչված) Արցախի ժողովրդի կյանքի իրավունքի իրացումը մեր հզորանալն է լինելու» բանաձևը բազմիցս է հնչում: Հզորանալու ու զարգանալու բաղադրիչները տարաբնույթ են՝ գաղափարական, վարքագծային, տնտեսական և այլն:

«Պատերազմներն ավարտվում են միայն անմահացածների համար» միտքը արձանագրվեց «Վերադարձ» հայկական ֆիլմում: Մեր երկրի զարգացման ու անվտանգային խնդիրների լուծման ուղիղ ճանապարհը գիտակրթական ու ռազմարդյունաբերական համակարգերի շեշտակի զարգացման հրամայականը կյանքի կոչելն է:

ՀՀ-ն տնտեսապես կարող է հզորանալ իր կազմակերպվածության ու զարգացման նոր՝ գիտելիքահենք ուղեգիծ տեղափոխվելու շնորհիվ: Արձանագրենք, որ դատարկ են բոլոր այն խոսակցությունները գիտելիքահենք տնտեսություն ունենալու և այդ հենքի վրա տեխնոլոգիական ու կառուցվածքային փոփոխություններով տնտեսական հեղափոխություն գործարկելու մասին, եթե այսօրվանից հետևողականություն չդրսևորենք հանրակրթության, բարձրագույն կրթության ու գիտական համակարգերի արդյունավետության բարձրացման հանդեպ՝ դրանք դարձնելով իշխանությունների գիտակցված գործելակերպ: Մեր երկրի դեմքը, իմիջը պետք է լինեն պաշտպանական համակարգը, բանակը, կրթությունն ու գիտությունը: Արմատական վերանայման կարիք կա ոչ թանկարժեք գիտության ու կրթության ոլորտում. ի վերջո գիտակրթական ծառայություններն ինքնարժեքից ցածր գնով իրացնելիս օրինաչափ պետք է լինեն համալսարանների սնանկացումը: Առաջին հայացքից պարադոքսալ է, որ այդպես չի լինում: Մակայն իրական պատճառն այն է, որ դասախոսն իր ուսերին է վերցնում այդ ամբողջ բեռը՝ իր մատուցած ծառայությունների դիմաց բազմապատիկ ցածր վարձատրությամբ շարունակելով կրթել սերունդներ, ստեղծել գիտական արդյունքներ: Թերֆինանսավորումն, իհարկե, երկարաժամկետ առումով չի կարող լինել որակյալ արդյունքին միտված գիտակրթական համակարգի գործունեության բանաձևը:

Գիտակրթական քաղաքականության վերանայման վերջերս նշմարվող երկչոտ քայլերը հատվածային են, չհամակարգված, ինչը ուղորտում ակնկալվելիք բավարար լուծումների չի կարող հավակնել:

Հաջորդ տեխնոլոգիական-էլեկտրոնային պատերազմին պատ-

րաստվելը պետք է այսօրվանից սկսվի (հիշենք, որ Հայաստանում գիտությունների ակադեմիան հիմնվեց 1943 թ.): Անցած տարիները խիստ կորստաբեր են եղել, սակայն որոշ ծիլեր նկատելի են: Երջանկահիշատակ Կարեն Վարդանյանի ջանքերով հիմնված ու գործող շուրջ 580 «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները պարարտ հող են ստեղծում ռազմարդյունաբերական ոլորտի որոշակի սեգմենտի զարգացման համար: Այն պետք է սնուցվի ու ընդարձակվի ինժեներական համալիր համակարգերի, գիտաուսումնաարտադրական կենտրոնների ստեղծմամբ:

Սույն աշխատանքում ներկայացված է տնտեսական հարաբերությունների ու տնտեսական քաղաքականության սահմանադրականացման² շրջանակը ՀՀ օրինակով: Վերջինիս ամբողջական թվայնացումը թույլ կտա մշակել ցուցիչների համախումբ՝ գնահատելով տնտեսական սահմանադրականացման մակարդակը և ուղենշելով այդ մակարդակի բարձրացման ուղղությունները:

2. Սահմանադրությունը՝ որպես սահմաններ դնող կանոնների ամբողջություն, և սահմանադրական տնտեսագիտությունը: «Սահմանադրություն» եզրույթի ստուգաբանությունը բացահայտում է դրա էությունը: Կազմված է «սահման» և «դիր» արմատներից, այն է՝ սահման դնող: Ըստ այդմ՝ պետության սահմանադրության գլխավոր առաքելությունն է սահմաններ դնել պետական իշխանության հայեցողության նկատմամբ, այն սահմանափակել իրավունքով:

Չնայած մարդկության և պետությունների հազարամյակների պատմությանը՝ ժամանակակից պատկերացումներին համահունչ «սահմանադրություն» ինստիտուտը բավական երիտասարդ է. ձևավորվել է շուրջ երկուսուկես դար առաջ: Դա պայմանավորված է նրա-

² Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, սահմանադրականության հիմնախնդիրները խորը հետազոտության են ենթարկվել ակադեմիական ոլորտում: Տե՛ս, օրինակ **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները / վերահրատարակություն՝ լրամշակումներով, Եր., «Նժար», 2016, 672 էջ, **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշտադիտարկում, Եր., «Նժար», 2016թ., 352 էջ, **Саргсян Г.** Некоторые подходы к разработке инструментария и методов реализации конституционной диагностики // Альманах «Нжар», Եր., 2016, էջ 79-93, **Գ. Հարությունյան, Հ. Լ. Սարգսյան, Ռ. Ա. Գևորգյան**, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, «Զանգակ», Եր., 2017, 139 էջ, **Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան**, Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը, «Զանգակ», Եր., 2018, 418 էջ, **Арутюнян Г. Г.** Конституционная экономика или антиконституционность (коррупционность) экономики? // Международный вестник "Конституционное правосудие". 2014, № 3, էջ 7-25, **Арутюнян Г., Саргсян Г., Геворгян Р.** „Конституционализм: проблемы диагностики, мониторинга и управления“, Конституционное правосудие, 2017, Եր., էջ 5-44, **Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R.** Diagnostics and Monitoring of Constitutionalism in Transition Economies, Lap Lambert Academic Publishing, 2018, **Gagik Harutyunyan, Hayk Sargsyan, Ruben Gevorgyan** - Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies Journal of Advanced Research in Law and Economics Volume VIII Issue 4(26). Article, 2017, էջ 1126-1135:

նով, որ սահմանադրությունների անհրաժեշտությունը ծագեց ավատատիրական աշխարհակարգի կործանման և միապետական վարչակարգերից հանրապետություններին անցման պատմական ժամանակաշրջանում: Սահմանադրություններով սահմանափակումներ դրվեցին իշխանության կամայականությունների նկատմամբ՝ բացառելով իշխանության կենտրոնացումը որևէ կետում՝ միապետի ձեռքում, ինչը բնորոշ էր «նախասահմանադրական» ժամանակաշրջանին:

Հատկանշական է, որ հայ իրավական մտքի պատմության մեջ առաջին անգամ «Սահմանադրություն» բառը գործածվել է ավելի քան 1.5 հազարամյակ առաջ, երբ V դարում Մեծ Հայքի Ուտիք նահանգի Ադվեն բնակավայրում ընդունվեց **«Սահմանադրություն կանոնական»**-ը՝ կանոնների մի եզակի ժողովածու, որն իր մշակման և ընդունման ընթացակարգերով, հետապնդած նպատակներով և հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությամբ մեծ ընդհանրություններ ունի սահմանադրության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների հետ՝ արտահայտելով հայ ժողովրդի պետական մտածողությունը, սեփական կյանքը կարգավորող կարևոր հարցերի իրավական լուծումները գտնելու ունակությունը, պետության խնդիրները ոչ թե բիրտ հարկադրանքի, այլ հասարակական համերաշխության հաստատմամբ լուծելու ձգտումը³:

Սահմանադրության հիմնափիլիսոփայությունն ամփոփված է հայ իրավական մտքի մեկ այլ կոթողային հուշարձանում՝ 1783 թվականին հայր և որդի Շահամիրյանների կողմից հեղինակված՝ ապագա հայկական անկախ պետության սահմանադրության նախագիծ հանդիսացող **«Որոգայթ փառաց»**-ում, որի վերնագրից բխում էր հիմնական ուղերձը՝ լարել որոգայթներ (թակարդներ) իշխանություն կրողների համար, որոնք հակված են փառամոլության, որպեսզի մնան ու գործեն իրենց վերապահված սահմանների շրջանակներում⁴:

Ուշագրավ է «սահմանադրություն» հասկացության՝ **Նոր հայկազյան բառգրքի** բնութագրումը՝ ներկայացնելով այն որպես *«Որոշումն սահմանաց և Տեսչութիւն վերին»*⁵: Վերջինիցս բխում է, որ ա) սահմանադրությունը որոշում է, վճիռ է, «օրինադրութիւն» է, բ) այն ունի սահմանային նշանակություն, այսինքն՝ դրանից գերակա «որոշում» լինել չի կարող, գ) դրա հիմքում ընկած են անփոփոխելի, «ի վերուստ տրված» արժեքներ⁶:

Սահմանադրությունները կարգավորում են հասարակական

³ Տե՛ս **Կ. Ղահրամանյան, Վ. Հովհաննիսյան**, 1500-ամյա հայկական սահմանադրությունը. ընդունման հանգամանքները և նշանակությունը, Եր., 1999, էջ 3-5, 29:

⁴ Հատկանշական է, որ աշխարհում առաջինը համարվող ԱՄՆ Սահմանադրությունն ընդունվեց 1787 թվականին՝ «Որոգայթ փառաց»-ից 4 տարի անց:

⁵ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. 2, ԵՂՀ հրատ., Եր., 1981, էջ 688:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհ. խմբ.՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Եր., 2010, էջ 9:

կյանքի գրեթե բոլոր ոլորտները, որոնցից առանցքայիններից է տնտեսականը: Սահմանադրությունն ամրագրում է այն սահմաններն ու կանոնները, որոնց շրջանակում պետք է ծավալվեն տնտեսական գործակալների միջև տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև իրականացվի պետության տնտեսական քաղաքականությունը: Այդ սահմանների պահպանմամբ է երաշխավորվելու քաղաքացիների սոցիալ-տնտեսական շահը՝ համընդհանուր բարեկեցությունը և սոցիալական արդարությունը:

Երկրում տնտեսական հեղափոխության լրկոմոտիվը կլինի այնքան հզոր ու սլացիկ, ու նշմարվող բոլոր հանգույցներում կհաղթահարվեն այնքան դժվարանցանելի բարձունքներ ու ոլորաններ, որքան լավորակ լինի սահմանադրությունը⁷:

Որքան լավորակ է գրավոր սահմանադրությունը՝ դրանում ամրագրված սկզբունքներով, դրույթներով ու նորմերով, որոնք վերաբերում են իշխանությունների տարանջատմանը, զսպման ու հակակշիռների կառուցակարգերին, ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմակայությանը, հանրային կյանքին ու տնտեսությանը, այնքան դյուրին կհաղթահարվեն հանդիպող բարձունքներն ու կտրուկ ոլորանները: Ավելին, էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ սահմանադրություններում կատարվող հիմնարար փոփոխությունները չեն նպաստում մարդկային զարգացման ցուցիչի բարելավմանը, ուստի հաճախակի փոփոխությունները միշտ չէ, որ արդարացված են⁸:

Տնտեսության և սահմանադրական կանոնների միջև սերտ փոխառնչությունների լավագույն արտահայտությունը՝ դարձավ **սահմանադրական տնտեսագիտությունը**, որի հիմնադիրը՝ Ջեյմս Բյուքենենը, 1986 թվականին արժանացավ տնտեսագիտության բնագավառի Նոբելյան մրցանակի: Ըստ Բյուքենենի՝ սահմանադրական տնտեսագիտությունը գիտական ուղղություն է, որն ուսումնասիրում է սահմանադրական կանոնների գործող հատկությունները, ինստիտուտները, որոնց շրջանակներում փոխազդում են անհատները և գործընթացները, որոնց միջոցով այդ կանոններն ու ինստիտուտներն առաջանում ու

⁷ Դեռևս 2018 թ. քաղաքական հեղափոխությունից հետո, նախանշելով ՀՀ իշխանությունների օրակարգային խնդիրների շրջանակը առաջիկա տարիների համար, ընդգծել ենք սահմանադրական փոփոխություններին ձեռնամուխ լինելու անհրաժեշտությունը: Տե՛ս **Հ. Մարգարյան**, Իշխանության գերխնդիրը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է: Ի՞նչ անել: Գիտագործնական խորհրդածողով: Հայաստանի տնտեսության զարգացման հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Եր., «Անտարես», 2018, էջ 9-16:

⁸ Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացմանը, սուբյեկտիվ գործոնի դերի նվազեցմանը, քաղաքական ու տնտեսական հնարավոր մենիշխանության կանխմանը, ընթացիկ ու հեռանկարային առաջնահերթությունների հստակեցմանն ու դրանց համարժեք ծրագրանպատակային քաղաքականությանը միտված առաջարկությունների վերաբերյալ տե՛ս **Գ. Հարությունյան, Հ. Մարգարյան, Ռ. Գևորգյան**, Սահմանադրականություն. ակտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ, 139 էջ:

ընտրվում են⁹: Նա հավելում է, որ սահմանադրական տնտեսագիտությունը փորձում է բացատրել իրավական-ինստիտուցիոնալ-սահմանադրական կանոնների այլընտրանքային համակցությունների գործող հատկությունները, որոնք *սահմանափակում են* տնտեսական և քաղաքական գործիչների ընտրությունն ու գործունեությունը¹⁰: Մեկ այլ սահմանմամբ՝ սահմանադրական տնտեսագիտությունը գիտական ուղղություն է, որն ուսումնասիրում է ազգային տնտեսական համակարգի շրջանակներում *անհատի սոցիալ-տնտեսական իրավունքների առավելագույն բավարարման հնարավորությունները*՝ տնտեսական նպատակահարմարությունը սահմանադրական զարգացման առկա մակարդակի հետ օպտիմալ համակցելու ճանապարհով¹¹:

Տնտեսական ոլորտում սոցիալական պետության հիմնական առաքելությունը մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման առավելագույն մակարդակն ապահովելու հնարավորություններ ու երաշխիքներ տրամադրելն է՝ իր տնտեսակարգի հիմքը հանդիսացող սոցիալական շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության ճանապարհով:

3. Պետության դերը տնտեսական հարաբերություններում: Տնտեսական հարաբերություններում ունեցած իրենց դերակատարմամբ պետությունները բաժանվում են երկու լայն խմբի՝ սոցիալական և ազատական: Թեպետ երկու դեպքում էլ տնտեսական կարգը հիմնված է շուկայական տնտեսական հարաբերությունների վրա, այնուհանդերձ սոցիալական պետությունները ստանձնում են տնտեսական հարաբերություններում անխուսափելիորեն առաջացող «սոցիալական անհարթությունները» (աղքատությունը, եկամուտների բևեռացումը, գործազրկությունը և այլն) նպատակային պետական քաղաքականությունների միջոցով մեղմելու պարտականություններ, այդ թվում՝ սոցիալական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության պոզիտիվ պետական քաղաքականություններ վարելու ճանապարհով:

⁹ St' u **Buchanan, J.** The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, № 1, 1990, էջ 1:

¹⁰ St' u **Van den Hauwe, Ludwig.** Constitutional economics, The Elgar companion to law and economics, 2nd edition / Edited by Jurgen G. Backhaus. –Edward Elgar Publishing, 2005, էջ 223-224, **Buchanan, James M.** Choice, Contract and Constitutions, Vol. 16 of The Collective Works of James M. Buchanan, Indianapolis: Liberty Fund, 2001, էջ 3-4:

¹¹ St' u **Лафитский В. И., Май В. А.** Конституционная экономика и основы экономического положения личности // Очерки Конституционной Экономики. 23 октября 2009 года / Ответственный редактор Г.А. Гаджиев. М.: Юстицинформ, 2009, էջ 92, Мишин А. А. Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник для вузов, 17-е издание. М.: Статут, 2013, գլ. 13, §1, USLegal սահմանումների կայք-էջը <http://definitions.uslegal.com/c/constitutional-economics>, Конституционная экономика / Отв. ред. Г.А. Гаджиев. М., Юстицинформ, 2010, էջ 11, **Баренбойм П. Д.** Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализма. М., ЛУМ, 2013, էջ 85:

Ազատական պետության դերը շուկայական տնտեսական հարաբերություններում առավելապես բնութագրվում է *laissez-faire*՝ չմիջամտելու սկզբունքով՝ պետությանը «գիշերային պահակի» դերակատարում վերագրելով: Նշված մոտեցումը տևական ժամանակ առաջ էր մղվում համաշխարհային ֆինանսական ինստիտուտների (մասնավորապես՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի) կողմից «Վաշինգտոնյան կոնսենսուս»-ով արտահայտված կանոնների միջոցով, ինչը փյուզվեց 2008 թվականին սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով¹²՝ առաջ բերելով «անափ» ազատականության մոտեցումների և պետության կարգավորիչ դերի ու սոցիալական կողմնորոշման վերախմաստավորման անհրաժեշտություն:

Ճգնաժամից հետո՝ 2009 թվականին, լույս տեսավ Ջ. Բյուքենենի «Տնտեսագետները հագուստներ չունեն» հոդվածը, որտեղ տնտեսագետներին վերագրվեց «մեղսակցություն»՝ «սահմանափակումների, կանոնների հավաքածուի կամ առավել լայն իմաստով՝ սահմանադրության գոյության չգիտակցման» տեսքով: Նա պնդում էր. «Տնտեսագետները պետք է ուշադրություն դարձրած լինեին և այժմ էլ դարձնեն սահմանադրական կառուցվածքի վրա, որի շրջանակներում տնտեսական հարաբերությունների մասնակիցներն իրականացնում են գործարքների բազմությունը, որը նկարագրում է շուկայական կարգը: Ինչպե՞ս են գործում շուկաները: Այս հարցն ինքնին անհամարժեք է և անպատասխանելի: Այն պետք է փոխարինվի հետևյալ հարցով՝ ինչպե՞ս են գործում շուկաները սահմանադրական և ինստիտուցիոնալ սահմանափակումների այս կամ այն հավաքածուի ներքո»¹³: Բյուքենենն առաջարկում էր կենտրոնանալ ոչ թե վերջնական արդյունքների, այլ սահմանափակումների՝ սահմանադրական կանոնների վրա, որոնք կարող են հանգեցնել այս կամ այն վերջնական արդյունքի ձևավորմանը¹⁴:

Տնտեսական հարաբերությունների երեք հիմնական մասնակիցները՝ պետությունը, քաղաքացիներն ու կազմակերպությունները գտնվում են մշտական փոխազդեցության մեջ: Մասնակիցներից յուրաքանչյուրը հետապնդում է իր նպատակներն ու շահերը: Վերջիններս, ինչպես նաև դրանց հասնելու եղանակներն ու միջոցները շատ դեպքերում միմյանցից տարբերվում են և նույնիսկ հակադրվում: Տնտեսական հարաբերությունների մասնակիցների գործողությունների հիմքը իրա-

¹² Տե՛ս, օրինակ՝ “Global Challenges, Global Solutions” – an Address at George Washington University By Dominique Strauss-Kahn, Managing Director, International Monetary Fund, April 4, 2011:

¹³ **Buchanan, James M.** Economists Have No Clothes, RMM, Vol. 0, Perspectives in Moral Science, ed. by M. Baurmann & B. Lahno, 2009, էջ 151:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 151-156:

վական նորմերն են¹⁵, որոնցում ելակետային և կենտրոնական տեղ է զբաղեցնում սահմանադրական իրավունքը:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացումը տնտեսական քաղաքականություն մշակողներից և իրականացնողներից պահանջում է, որ նրանք կարճաժամկետ կամ հեռահար տնտեսական որոշումներ կայացնելիս պարտավորված լինեն հետևել սահմանադրությամբ ամրագրված նորմերին, ինչպես նաև այն սկզբունքներին, որոնք ուղղակիորեն արտացոլված չեն սահմանադրության տեքստում, սակայն բխում են սահմանադրական արժեքանությունից և երկարաժամկետ հորիզոնում ապահովում են մարդկանց սոցիալ-տնտեսական իրավունքների իրացումը¹⁶:

4. Սոցիալական շուկայական տնտեսությունը որպես սոցիալական պետության տնտեսակարգ:

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության 1-ին անփոփոխելի հոդվածով իրեն հռչակել է սոցիալական պետություն: Այս հիմնարար սկզբունքը որոշակիացվել է Սահմանադրության 12-րդ հոդվածում, որտեղ որպես ՀՀ տնտեսական կարգի հիմք ամրագրվել է սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքը: Այս սկզբունքը պատմականորեն ձևավորվել է եվրոպական տարածքում, որտեղ գերակշռող սոցիալական պետություններն են: Մասնավորապես, գործնականում այն առաջին անգամ կիրառվել է 1949 թվականին Գերմանիայում՝ Կոնրադ Ադենաուերի կառավարությունում, և հենց այդ հայեցակարգի վրա հիմնված պետական քաղաքականությամբ է տեղի ունեցել ավերակների վերածված գերմանական տնտեսության հետպատերազմյան վերածնունդը, արձանագրվել տնտեսական պատմության մեջ առավել հայտնի երեք «տնտեսական հրաշքներից» մեկը:

Եվրոպական միությունը *Լիսաբոնյան համաձայնագրի* շրջանակներում (որը ոչ պաշտոնապես կոչվում է նաև Եվրոպական միության Սահմանադրություն) ԵՄ ողջ տարածքի համար որդեգրել է սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը (հոդվ. 2, մաս 3): Վերջինս դիրքավորվում է երկու այլընտրանքային ծայրահեղ մոտեցումների՝ շուկայական մեխանիզմի գերազնահատված և պետության թերազնահատված կարգավորիչ դերով ուղեկցվող *ազատական շուկայական տնտեսության* (անգլոսաքսոնական մոդել, որին առավելապես հարում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Իռլանդիայի, Նոր Զելանդիայի տնտեսական կարգերը) և հանրային սեփականության գերակայությամբ ու պլանային տնտեսության տարրերով բնութա-

¹⁵ Տե՛ս **Баренбойм П. Д., Лафитский В. И., Мау В. А., Захаров А. В., Меркулова Н. Ю.** Конституционная экономика для школ: Учебное пособие. М., Юстицинформ, 2006, էջ 6:

¹⁶ Տե՛ս **Barenboim P., Merkulova N.** 25th Anniversary of Constitutional Economics: The Russian Model and Legal Reform in Russia // *The World Rule of Law Movement and Russian Legal Reform.* М, Justitsin-form, 2007, էջ 181:

գրվող *սոցիալիստական շուկայական տնտեսության* միջև (Չինաստանի տնտեսական կարգն է)՝ լինելով սոցիալական պետություններին ամենաբնորոշ տնտեսակարգը¹⁷:

5. Սոցիալ-տնտեսական իրավունքների իրացվածության մակարդակը որպես սոցիալական շուկայական տնտեսության գործունեության ելքային արդյունք: Հետազոտողների շրջանում կա համոզմունք, որ երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում քաղաքական ապստամբությունները և ամբողջատիրական ռեժիմների առաջացումը համատարած գործազրկության ու աղքատության հետևանք են: Ըստ այդմ՝ սոցիալ-տնտեսական իրավունքների իրացվածության մեծ դեֆիցիտը սկսեց դիտարկվել որպես սպառնալիք ժողովրդավարական իրավական պետությանը: Պատահական չէ նաև մասնագիտական շրջանակներում առկա այն դիտարկումը, որ Հիտլերը գերմանական հիպերինֆլյացիայի հոգեզավակն էր:

1979 թ. Կ. Վասակի առաջ քաշած տեսության համաձայն՝ սոցիալ-տնտեսական իրավունքները մարդու իրավունքների երկրորդ սերունդն են¹⁸: Սոցիալ-տնտեսական իրավունքները տարբերվում են քաղաքական-քաղաքացիական իրավունքներից դրանց առնչությամբ պետության դերով: Եթե վերջիններիս դեպքում շեշտադրվում է պետության միջամտությունից գերծ լինելու հանգամանքը, ապա առաջինների դեպքում՝ պետության պաշտպանության և աջակցության պահանջը, այլ կերպ՝ պետության առավել ակտիվ, պոզիտիվ դերակատարումը: Այդ իսկ պատճառով ընդունված է ասել, որ քաղաքացիական-քաղաքական իրավունքներն «անվճար» են, մինչդեռ սոցիալ-տնտեսական իրավունքները «ծախսատար» են, քանի որ դրանք պարտավորեցնում են պետություններին ապահովել անհատի բարեկեցությունը:

Թ. Մարշալն իրավունքների զարգացումը բաժանեց էվոյուցիոն փուլերի՝ մասնավորապես նշելով, որ քաղաքացիական իրավունքները 18-րդ դարի խոշոր ձեռքբերումն են, որոնցով հիմք դրվեց օրենքի առջև բոլորի հավասարության գաղափարին: Քաղաքական իրավունքները 19-րդ դարի հիմնական ձեռքբերումն են, որոնցով հնարավորություն էր ստեղծվում ավելի ընդլայնված մասնակցություն ապահովելու սուվերեն իշխանության իրացմանը, իսկ սոցիալական իրավունքները 20-րդ դարի ձեռքբերումն են, որոնք հասարակության բոլոր անդամներին բավարար կենսապայմաններ ունենալու հնարավորություն են ընձեռում¹⁹:

¹⁷ Տե՛ս **Marktanner M.** Addressing the Marketing Problem of the Social Market Economy, Berlin 60 Years of Social Market Economy - Formation, Development and Perspectives of a Peacemaking Formula, 2010, էջ 170-188:

¹⁸ Առաջինը քաղաքացիական և քաղաքական, իսկ երրորդը համերաշխության իրավունքներն են, որոնք ներառում են ինքնորոշման և զարգացման իրավունքները:

¹⁹ Տե՛ս «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ»: Դասագիրք / Ա. Էյդե, Կ. Կրաուզե, Ա. Ռոզաս, Եր., «Տիգրան Մեծ», 2009:

Մարդու սոցիալ-տնտեսական իրավունքները բովանդակող առաջին ամենահայտնի փաստաթուղթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է, որին հաջորդեց ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի ընդունումը: Վերջինս, ի տարբերություն հռչակագրի, ունի պարտադիր իրավական ուժ վավերացնող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումը ոգեշնչած աղբյուրներից մեկն ընդունված է համարել ԱՄՆ նախագահ Թ. Ռուզվելտի «Չորս ազատությունների մասին» ելույթը Կոնգրեսին ուղղված ամենամյա ուղերձում: Այդ ազատություններից մեկն էլ կարիքից ազատությունն էր: Այլ կերպ ասած, ըստ Ռուզվելտի, կարիքավոր մարդն ազատ մարդ չէ:

Մարդու պատշաճ կենսամակարդակի ապահովման երկու հիմնական աղբյուրներն են սեփականության և աշխատանքի իրավունքների բավարար իրացվածությունը: Իսկ եթե մարդը չունի բավարար սեփականություն կամ աշխատանք, որը թույլ կտա ապահովել իր պատշաճ կենսամակարդակը, ապա տվյալ դեպքում ընդգծված կարևորություն են ստանում սոցիալական ապահովության իրավունքը և վերջինիս ապահովումը պետության կողմից իր տնտեսական հնարավորությունների շրջանակներում²⁰:

6. Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման շրջանակը ՀՀ-ում: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, մարդու արժանապատվությունն անօտարելի է և իր իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքն է: Այստեղ «բարձրագույն արժեք» հասկացությունը վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: Այն նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող մարդուց բարձր դասվել²¹: Այլ կերպ ասած՝ «Պետությունն է մարդու համար և ոչ թե մարդը պետության», և «մարդակենտրոն» պետական, այդ թվում՝ տնտեսական քաղաքականությանն այլընտրանք չի կարող լինել:

Մարդու արժանապատվության գումարելիներից մեկը նրա արժանապատիվ (պատշաճ) կենսամակարդակն է, որը պետք է ապահովվի ինչպես տնտեսական հարաբերություններին հավասար մասնակցային հնարավորությունների, սեփականության և աշխատանքի իրավունքների արդյունավետ իրացմամբ, այնպես էլ պետության կողմից ի-

²⁰ Տե՛ս նույն տեղը:

²¹ ՄԴՌ-649, 4 հոկտեմբերի, 2006 թ.:


րականացվող սոցիալական քաղաքականության միջոցով:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է՝ հիմնված մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա: Պետական քաղաքականության միջոցով այն ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Վերջին տարիներին մասնագիտական գրականության մեջ բանավիճային է դառնում սոցիալական արդարության և տնտեսության արդյունավետության առաջնահերթությունների հիմնահարցը՝ նկատի առնելով դրանց պատճառահետևանքային հարաբերությունները:

Գծապատկեր 1

ՀՀ տնտեսական կարգի հենասյուները



ՀՀ տնտեսակարգի հիմքը հանդիսացող սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքի հենասյուներից յուրաքանչյուրի գծով ՀՀ Սահմանադրությունը սահմանել է հետևյալ դրույթները.

Ա. Մասնավոր սեփականություն. ա) ՀՀ-ում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը (հոդվ. 10, մաս 1): Այնուհանդերձ, ՀՀ տնտեսական կարգը հիմնված է մասնավոր սեփականության վրա (հոդվ. 11): բ) Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք (հոդվ. 60, մաս 1): գ) Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով (հոդվ. 60, մաս 7):

Բ. Տնտեսական գործունեության ազատություն: Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք (հոդվ. 59, մաս 1):

Գ. Ազատ տնտեսական մրցակցություն: ա) Շուկայում մենաշնորհ

կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են (հոդվ. 59, մաս 3): ք) Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով (հոդվ. 59, մաս 2):

Դ. Սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացում՝ ուղղված ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Պետությունն ապահովում է. ա) *հարկաբյուջետային քաղաքականության իրականացում:* Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ (հոդվ. 60, մաս 8): Ազգային ժողովը Կառավարության ներկայացմամբ ընդունում է պետական բյուջեն (հոդվ. 110, մաս 1), բ) *Գներքի կայունություն:* Վերջինս Կենտրոնական բանկի հիմնական նպատակ է (հոդվ. 200, մաս 2), որի ապահովման համար Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը (հոդվ. 200, մաս 3): Սույն նպատակի ապահովման համար անհրաժեշտ պայման է Կենտրոնական բանկի անկախությունը (հոդվ. 200, մաս 1), գ) *Ֆինանսական կայունություն:* Վերջինս Կենտրոնական բանկի հիմնական նպատակ է (հոդվ. 200, մաս 2), որի ապահովման համար Կենտրոնական բանկն իրականացնում է մակրոպրոդյուցնցիալ քաղաքականություն, դ) *բյուջետային միջոցների օգտագործման օրինականություն և արդյունավետություն:* Վերջինիս նպատակ է Հաշվեքննիչ պալատը, որը անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ (հոդվ. 198, մաս 1), ե) *Ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական քաղաքականության իրականացում* (հոդվ. 154):

ՀՀ Սահմանադրությունը սահմանում է նաև սոցիալ-տնտեսական ոլորտում **պետական քաղաքականության հիմնական նպատակները** (հոդվ. 86), որոնց շարքին են դասվում գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, բնակարանային շինարարության խթանումը, տարածքային համաչափ զարգացումը:

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է նաև մարդու հետևյալ **սոցիալ-տնտեսական իրավունքները**, որոնց չափը սահմանվում է օրենքին համապատասխան կախված պետության հնարավորություններ-

րից: Դրանք են ա) յուրաքանչյուր աշխատող ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք (հոդվ. 82), բ) յուրաքանչյուր ոք ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում *սոցիալական ապահովության իրավունք* (հոդվ. 83), գ) յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ ունի *արժանապատիվ գոյության իրավունք* (հոդվ. 84, մաս 1), դ) յուրաքանչյուր աշխատող անձ ունի նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք (հոդվ. 84, մաս 2):

Հարկ է նշել ևս մի քանի սոցիալ-տնտեսական իրավունքների մասին, որոնք, թեև տեղ չեն գտել ՀՀ Սահմանադրությունում, այնուհանդերձ ամրագրված են Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններով:

Մասնավորապես՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան սահմանում է. ա) բոլոր աշխատողներն ունեն *արդար վարձատրության իրավունք*, որը բավարար կլինի նրանց և նրանց ընտանիքների պատշաճ կենսամակարդակի համար (հոդվ. 4): Այս իրավունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող իրավունք ունի արդար ու գոհացուցիչ վարձատրության, որն ապահովի մարդավայել գոյություն իր և իր ընտանիքի համար և անհրաժեշտության դեպքում լրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով (հոդվ. 23, մաս 3), ինչպես նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով (հոդվ. 7, մաս ա, կետ 1): Այս իրավունքը համահունչ է նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին առ այն, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար վարձատրության իրավունք, բ) յուրաքանչյուր ոք ունի *բնակարանի իրավունք* (հոդվ. 31):

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի համաձայն ճանաչվում է յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար *բավարար կենսամակարդակի իրավունքը*, որը ներառում է բավարար սննդի, հագուստի ու բնակարանի և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը (հոդվ. 11, մաս 1):

7. Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման շրջանակի թվայնացումը: Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման վերոնշյալ շրջանակի թվայնացման նպատակով սովյալների՝ միջազգային շտեմարաններից առանձնացվել են հետևյալ ցուցիչները՝

Ա) Մասնավոր սեփականություն

• **Հերիթիջ հիմնադրամի** կողմից հրապարակվող «Մեփականության իրավունքներ» բաղադրյալ ցուցիչը, որը գնահատում է, թե որքանով է երկրի իրավական դաշտը թույլ տալիս ձեռք բերել, տիրապետել և օգտագործել կառավարության կողմից արդյունավետորեն գործադրվող՝ հստակ օրենքներով ապահովված մասնավոր սեփականություն: Այլ կերպ՝ այն գնահատում է, թե որքանով են երկրի օրենքները պաշտպանում մասնավոր սեփականության իրավունքները, և որքանով են այդ օրենքները հարգվում: Այն գնահատում է նաև պետության կողմից մասնավոր սեփականության բռնագրավման (էքսպրոպրիացիայի) հավանականությունը²²: Այս ցուցիչով Հայաստանի գնահատականը 2020 թվականին կազմել է 60.7 միավոր (100 միավորանոց սանդղակում), որը ենթադրում է սեփականության իրավունքների գործադրման թույլ մակարդակ և ուշացումներ այդ գործընթացում: Տվյալ գնահատականով Հայաստանը զբաղեցնում է 73-րդ տեղը աշխարհի 186 երկրների շարքում:

• **Մեփականության իրավունքների այլանսի** կողմից հրապարակվող «Մեփականության իրավունքների միջազգային ինդեքսը», որը գնահատում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր սեփականության իրավունքների իրացվածության մակարդակը: Հայաստանի գնահատականը ֆիզիկական սեփականության իրավունքների գծով 2019 թվականին կազմել է 6.9 միավոր՝ զբաղեցնելով 49-րդ տեղը, իսկ մտավոր սեփականության իրավունքների գծով՝ 3.4 միավոր՝ զբաղեցնելով 123-րդ տեղը աշխարհի 129 երկրների շարքում²³:

• **Համաշխարհային տնտեսական համաժողովի՝** «Մեփականության իրավունքներ» և «Մտավոր սեփականության պաշտպանությունը» ցուցիչները, որոնք գնահատում են սեփականության իրավունքների պաշտպանվածության մակարդակը: Հայաստանի համար գնահատվել են՝ համապատասխանաբար 4.8 և 4.2 միավոր (7 միավորանոց սանդղակում)՝ զբաղեցնելով 46-րդ և 65-րդ տեղերը աշխարհի 141 երկրների շարքում:

Բ) Տնտեսական գործունեության ազատություն

• **Հերիթիջ հիմնադրամի** «Գործարարության ազատությունը» համաթիվը՝ հիմնված Համաշխարհային բանկի «Գործարարությանը զբաղվելը» համաթիվի վրա, որը գնահատում է բիզնեսը սկսելու, վարելու և դադարեցնելու դյուրինությունը 13 ցուցիչների հիման վրա: Այս ցուցանիշի գծով Հայաստանի գնահատականը 2020 թվականին կազմել է 81 միավոր՝ զբաղեցնելով 25-րդ տեղը աշխարհի 186 երկրների շարքում:

Գ) Ազատ տնտեսական մրցակցություն

²² Տե՛ս «2020 Index of Economic Freedom», Heritage Foundation, 2020, էջ 489:

²³ <https://www.internationalpropertyrightsindex.org/country/armenia>

- **Համաշխարհային տնտեսական համաժողովի** հետևյալ ցուցիչները՝

- *«Տեղական մրցակցության ինտենսիվությունը»* ցուցիչը ցույց է տալիս տվյալ երկրի տեղական շուկաներում մրցակցության ինտենսիվության մակարդակը՝ սկսած բացարձակ ոչ ինտենսիվից (1) մինչև ծայրահեղ ինտենսիվ (7)²⁴: 2018 թվականին այն Հայաստանի համար գնահատվել է 5.2 միավոր (66-րդ տեղը աշխարհի 141 երկրների շարքում):

- *«Շուկայական գերիշխանությունը»* ցուցիչը հիմնված է հետևյալ հարցի վրա. ինչպե՞ս կրնոթագրեք կորպորատիվ ակտիվությունը ձեր երկրում (1 = գերիշխում են մի քանի գործարար խմբեր, 7 = սփռված է բազմաթիվ ձեռնարկությունների շրջանում)²⁵: 2018 թվականին այն Հայաստանի համար գնահատվել է 4.3 միավոր (28-րդ տեղը աշխարհի 141 երկրների շարքում):

- *«Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը»* ցուցիչը, որը բնութագրում է, թե տվյալ երկրում որքան արդյունավետ են հակամենաշնորհային քաղաքականությունները՝ արդար մրցակցության երաշխավորման հարցում (1 = ընդհանրապես արդյունավետ չեն, 7 = ծայրահեղ արդյունավետ են)²⁶: 2018 թվականին այն Հայաստանի համար գնահատվել է 4.2 միավոր (40-րդ տեղը աշխարհի 141 երկրների շարքում):

Դ) Հարկաբյուջետային քաղաքականության իրականացում

- Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող հարկեր/ՀՆԱ ցուցանիշը, որը ցույց է տալիս հանրային կարիքները բավարարելու նպատակով միջոցների հավաքագրելիության մակարդակը, ինչպես նաև մոտարկում է տնտեսության սովերայնացման մակարդակը: Այս ցուցանիշը Հայաստանի համար 2018 թվականին կազմել է 20.9% (39-րդ տեղը աշխարհի 134 երկրների շարքում):

- **Հերիթիջ հիմնադրամի՝ «Ֆիսկալ առողջությունը»** ցուցիչը, որը վերջին երեք տարիների բյուջեի դեֆիցիտների և պարտք/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշների ագրեգացված մեծությունն է: Այն Հայաստանի համար 2020 թվականին գնահատվել է 68.8 միավոր (114-րդ տեղը աշխարհի 186 երկրների շարքում):

- Ե) Գների կայունության ապահովում** (արտացոլում է պետության կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը):

- **Համաշխարհային բանկի** կողմից հրապարակվող *գնաճի* ցուցանիշը՝ հաշվարկված սպառողական գների համաթվի միջոցով: Հայաստանը

²⁴ Տե՛ս “The Global Competitiveness Report 2015-2016”, World Economic Forum, Geneva, 2015, էջ 377:

²⁵ Տե՛ս նույն տեղը:

²⁶ Տե՛ս նույն տեղը:

տանում 2019 թվականին կազմել է 1.4%, որը գնաճի թիրախային միջակայքի ստորին շեմից ցածր է 1.1%-ային կետով: Այս ցուցանիշով Հայաստանը զբաղեցրել է 144-րդ տեղը աշխարհի 192 երկրների շարքում: Գնաճի կայուն և ցածր մակարդակը «հանրային բարիք» է, քանի որ հակառակ իրավիճակը ստեղծում է սոցիալական մեծ ծախսեր և «ռեգրեսիվ հարկի» համանմանությամբ ավելի մեծ չափով ազդում է սոցիալապես ավելի խոցելի խավերի վրա:

Ձ) Ֆինանսական կայունության ապահովում (արտացոլում է պետության կողմից իրականացվող միկրո- և մակրոպրոդեկցիալ քաղաքականությունների արդյունավետությունը:)

• **Արժույթի միջազգային հիմնադրամի** կողմից հրապարակվող ֆինանսական կայունության հետևյալ ցուցանիշները

◦ *Կապիտալի համարժեքության ցուցանիշ*, որը նորմատիվային կապիտալի հարաբերակցությունն է ռիսկով կշռված ակտիվներին: Հայաստանում այն կազմել է 17.6% (74-րդ տեղը 134 երկրների շարքում): ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն շեմը 12%-ն է:

◦ *Ընդհանուր իրացվելիության ցուցանիշ*, որը իրացվելի ակտիվների հարաբերակցությունն է ընդհանուր ակտիվներին և կազմում է 27.1% (50-րդ տեղը աշխարհի 134 երկրների շարքում):

◦ *Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը* ընդհանուր վարկերի կազմում, որը Հայաստանում կազմել է 5.5% (45-րդ տեղը աշխարհի 133 երկրների շարքում):

Է) Սոցիալ-տնտեսական իրավունքների իրացվածության մակարդակ (արտահայտում է պետական քաղաքականության արդյունավետությունը ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության ապահովման գործում)

• **Պատշաճ կենսամակարդակի իրավունք**

◦ *Մեկ շնչին ընկնող ՀՆԱ* (ըստ գնողունակության համարժեքի). ըստ Համաշխարհային բանկի տվյալների հենքի՝ ՀՀ-ում 2019 թվականին այն կազմել է 14,220 ԱՄՆ դոլար (114-րդ տեղը աշխարհի 222 երկրների շարքում):

◦ *Աղքատության մակարդակ*, որը, ըստ Համաշխարհային բանկի տվյալների հենքի, օրական \$5,5 աղքատության գծի պարագայում, Հայաստանի համար 2018 թվականին կազմել է 50.4%:

◦ *Ջինիի գործակից*, որը, ըստ Համաշխարհային բանկի տվյալների հենքի, 2018 թվականին Հայաստանում կազմել է 34.4 միավոր:

• **Աշխատանքի իրավունք**

◦ *Գործազրկության մակարդակ*, որը, ըստ Համաշխարհային բանկի տվյալների հենքի, Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանության համաձայն, 2019 թվականին Հայաստանում կազմել է 17%:

• **Արդարացի վարձատրության իրավունք**

○ Նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցություն, որը, Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն, 2019 թվականին Հայաստանում կազմել է 30.1%: Եվրոպական ստանդարտների համաձայն՝ վարձատրությունը համարվում է արդարացի, եթե տվյալ երկրում նվազագույն աշխատավարձը կազմում է միջին աշխատավարձի առնվազն 60%-ը²⁷:

• **Սոցիալական ապահովության իրավունք**

○ Սոցիալական պաշտպանության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցություն, որը 2013 թվականի դրությամբ Հայաստանում կազմել է 6.97%:

Տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման թվայնացված շրջանակի հիման վրա, տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների կիրառությամբ հնարավոր է կառուցել սահմանադրականացման մակարդակն արտացոլող ազդեցացված ցուցիչ՝ համաթիվ, և իրականացնել համեմատական վերլուծություններ ինչպես ժամանակի ընթացքում, այնպես էլ աշխարհի այլ երկրների հետ՝ վեր հանելով «նեղ» տեղերը և առաջադրելով լուծումներ՝ միտված տնտեսական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակի բարձրացմանը:

Բանալի բառեր – տնտեսական սահմանադրականացում, սոցիալական պետություն, սահմանադրականություն, սահմանադրական տնտեսագիտություն, մարդու իրավունքներ, թվայնացում

ГАЙК САРГСЯН, ЖИРАЙР МХИТАРЯН – Конституционализация экономических отношений в социальном государстве (На примере РА). – В последние десятилетия экономическая конъюнктура стала всё более уязвимой, частота экономических и финансовых кризисов возросла, а каждый кризис неизбежно приносил с собой новый посткризисный статус-кво, который никогда не повторял докризисную ситуацию и таким образом бросал вызов текущим экономическим парадигмам и текущей экономической политике. В этой изменяющейся экономической среде чрезвычайно важными становятся аксиологические фундаменты. Несмотря на различные сдвиги они должны закрепить экономические отношения и политику в долгосрочной перспективе. В статье обозначены рамки конституционализации экономических отношений и политики на примере Армении. Полная их цифровизация позволит разработать набор показателей, оценивающих уровень экономического конституционализма и указывающих векторы его повышения.

Ключевые слова: экономический конституционализм, социальное государство, конституционализм, конституционная экономика, права человека, цифровизация

HAYK SARGSYAN, ZHIRAYR MKHITARYAN – Constitutionalisation of Economic Relations in Welfare State (on example of RA). – In recent decades, the

²⁷ St u Świątkowski, A. The Right to Fair Remuneration: European Standards, TEISE, № 79, 2011, էջ 186-192:

economic environment has become increasingly vulnerable, the frequency of economic and financial crises has increased, and each crisis has inevitably brought with it a new post-crisis “status quo” that has never repeated the pre-crisis situation, thus challenging current economic paradigms and current economic policies. In this changing economic environment, the existence of economic axiological fundamentals is becoming more and more important, which, despite various economic shifts, will consolidate economic relations and economic policies in the long term. This article presents the framework for the constitutionalization of economic relations and economic policy on the example of the Republic of Armenia. The complete digitalization of the latter will make it possible to develop a set of indicators that assess the level of economic constitutionalism, indicating the directions for its increase.

Key words: *economic constitutionalism, welfare state, constitutionalism, constitutional economics, human rights, digitalization*

Ներկայացվել է՝ 14.08.2020

Գրախոսվել է՝ 02.11.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.12.2020